

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանը (այսուհետ՝ ՇՏՀ կամ Համալսարան) հիմք ընդունելով իր առաքելությունն ու ռազմավարական ծրագիրը, արտաքին կապերի ընդլայնման և միջազգային համագործակցության խթանման նպատակով որդեգրել է հետևյալ քաղաքանությունը.

- Համալսարանը կարևորում է արտաքին կապերի և միջազգայնացման խթանումն ու ընդլայնումը և այն համարում ՇՏՀ-ի գլխավոր ռազմավարական ուղղություններից մեկը:
- Ձգտում է դառնալ միջազգային բարձրագույն կրթական տարածքի մի մաս, լինել մրցունակ, առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն:
- Միջազգային կապեր հաստատել հայաստանյան, ԱՊՀ երկրների, արտասահմանյան բուհերի և գիտակրթական այլ հաստատությունների հետ, և դրանով նպաստել համալսարանի ինտեգրմանը եվրոպական միջազգային կրթական տարածքին, աջակցել արցախյան գիտնականներին՝ արտասահմանյան բուհերում ներկայացնելու հայկական գիտությունը, գիտահետազոտական և ուսումնական ծրագրերի իրականացման առումով հասնել միջազգային որակական ստանդարտներին, համապատասխանեցնել Համալսարանի և արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին ու ուսումնական պլաններին, ապահովել ուսանողների շարժունակությունը:
- Բարձրացնել Համալսարանի միջազգային հեղինակությունը՝ այն դարձնելով առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և Համալսարանը դարձնել օտարազգի ուսանողների ուսուցման համար մրցունակ կրթօջախ (Փոփ. 13.06.2019թ., N 1-06/19/9):

Միջազգային համագործակցության ոլորտում Համալսարանի հիմնական նպատակներն են.

- Արտերկրում Համալսարանի հեղինակության բարձրացումը,
- Որակի միջազգային ստանդարտներին համապատասխան հետազոտական և կրթական ծրագրերի ներդրումը,
- Համալսարանի և արտասահմանյան առաջատար բուհերում գործող մասնագիտական կրթական ծրագրերի և ուսուցման պլանների ներդաշնակեցումը,
- Ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության ապահովումը՝ Արցախից արտերկիր և հակառակը, աշխատակիցների ընդգրկումը միջազգային կրթական գործընթացներում և Համալսարանը արտերկրից ժամանած

ուսանողների ուսուցման տարածաշրջանային կենտրոն դարձնելը (Փոփ. 13.06.2019թ., N 1-06/19/9):


Միջազգային համագործակցության ոլորտում ՇՏՀ-ի խնդիրներն են.

- միջազգային չափանիշներին համապատասխան Համալսարանի կրթական և գիտական գործունեության որակի ապահովումը, եվրոպական կրթական չափանիշների ներդրումը և կիրառումը.
- արտասահմանյան բարձրագույն գիտակրթական հաստատությունների հետ կապերի հաստատումը և ուսանողական ու գիտամանկավարժական գիտակրթական փոխանակման ծրագրերի իրականացումը,
- մասնակցությունը միջազգային կրթական և գիտահետազոտական ծրագրերին և դրանց իրականացումը,
- միջազգային կրթական որակական չափանիշների ներդրումը և կիրառումը, Համալսարանի արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների համադրումը, արտասահմանյան արդյունավետ փորձի տեղայնացումը,
- միջազգային շուկայում գյուղատնտեսության ոլորտի մրցունակ մասնագետների թողարկումը՝ նաև նոր մասնագիտությունների և մասնագիտացումների հաշվին (Փոփ. 13.06.2019թ., N 1-06/19/9):

Միջազգային համագործակցության բնագավառում լուծելով առաջադրված խնդիրները Համալսարանը՝

- իրականացնում է միջազգային կրթական, գիտամանկավարժական և խորհրդատվական գործունեություն,
- մասնակցում է կրթության որակի բարձրացմանն ու ինտեգրմանը վերաբերվող միջազգային միջոցառումներին,
- կազմակերպում և անց է կացնում արտասահմանյան հեղինակավոր ուսումնական հաստատությունների հետ ուսանողների և պրոֆեսորադասախոսական աձնակազմի շարժունությանն ու փորձի փոխանակմանը նպաստող գործառույթներ,
- մասնակցում է միջազգային հիմնադրամների կողմից հայտարարված մրցութային ծրագրերին:

Նախագահ՝



Լ.Վ.Թոքմաջյան

Քարտուղար՝



Ա.Ա.Առաքելյան